ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2019 թվականի օգոստոսի 20-ի N 2 նիստի որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդների անվանական կազմը հաստատելու և առաջին նիստերը գումարելու մասին»* N 266 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 36-րդ կետում ***«Սիմոնյան Վահան»*** բառերը փոխարինել ***«Բեյբության Լաուրա»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

2019 թվականի օգոստոսի 30
ք. Հրազդան
N 182-Ա